## ԲԱՌԱՐԱՆ

*Ագդակ* - ծիսական թխվածք:
*Ալա* - ձեթի զտումից հետո զամբյուղում առաջացած քուսպի քանակություն:
*Ալանի* - քաղցու:
*Ակռա* - աղացվող հումքը խառնելու թիակ:
*Ակռահատիկ, ակռասորիկ, ատամնուր, ատամնորիկ, կճախաշ, կեղքահատիկ, կեռահատիկ, հատիկ* - ծիսական ուտեստ:
*Աղաղ* - գարու ալյուրից, աղով շաղախված հյուս:
*Աղանձ, խայծաղ, խակաղ, կարկատ* - ծիսական ուտեստ:
*Աղցան* - ծիսական և առօրյա ուտեստ:
*Անուշուրթ, խին, խեղեփ* - ձիթատու հատիկների տրորված զանգված:
*Ասար* - ձիթհանի բանվոր:
*Արջ* - մամլիչի պտուտակային սարքի փայտե պնդօղակ:
*Արևածաղիկ, արևադեմ, արևերթիկ, արևելոց ծաղիկ* - ձիթատու բույս:
*Բալարան* - մետաղական թմբուկաձև սարք, զելաստը եփելու համար:
*Բալաք* - ձիթհանի բանվոր:
*Բալիմ, բալըմ, բաղմ* - կալսված կտավատի և սորեկի ցողունները:
*Բախտաքար, կարմնջաքար* - պատի խոռոչի վերին, հորիզոնական քարը:
*Բաղարջ, բաղաջ* - ձեթով կրկենի:
*Բարաքյաթ* - բարիք, օջախի հաջողության գրավական:
*Բաքմազ* - թթի և խաղողի հյութից եփված քաղցու:
*Բեհեզ* - կտավատի թելանյութից նուրբ գործվածք:
*Բեռ* - մամլիչ զերանների ճնշմանն ի հակակշիռ խոշոր քարերով շարված պատի հատվածը:
*Բիշի* - ծիսական թխվածք:
*Բլանուց, թավլա* - ձիթհանի քաշող անա-սունների մսուրք:
*Բնատեն* - կաշվից հյուսված հաստ ճոպան:
*Բռմբի* - հացատեսակ, որին ձվր դեղնուց են քսել և վրան ձիթատուների հատիկներ սփռել:
*Բով* - պով, ֆուռ, փուռ:
*Բովտուն* - բովի վերին մակերեսը:
*Բովքար, չաքուրկա* - բովտան կողային քարերը:
*Բոհնչ* - ձիթատու սերմերով վայրի թուփ:
*Բևեկն* - ձիթատու բույս:
*Գազ, օշնան, չողան* - բույս, որի մոխիրը օգտագործվել է օճառ եփելիս:
*Գարեխաշի պաս* - զարու հասունացման և հնձի ժամանակ:
*Գարու խոր (հոր)* - միջինքի խմորից գարու հատիկներով թխվածք:
*Գելաստ, գելազ, գիլաս, գիլազ, կյալաս* - ձիթատուների հատիկների աղացված և հունցված զանգվածը:
*Գետնանուշ* - ձիթատու բույս:
*Գերան, լեռ, ղոշատ* - ձիթհանի մամլիչ գերան:
*Գերանատուն, ձիթատուն* - ձիթհանի մամլիչ արտադրամաս:
*Գերանի պորտ* - հողում թաղված քարե կամ փայտե հենարան,որի վրա, հանգիստ ժամանակ, նստում էին մամլիչ զերանները:
*Գրվանքա* - կշռի միավոր. 409,5 գ:
*Գունղ* - ճրագի միջնամասը, ուր ձեթ են լցրել:
*Գուռ, թաղար* - միակտոր քարից շինված ավազան:
*Դիրք, տիր* - միաժամանակ մամլման ավազանում դրվող հումքի քանակությունը:
*Դոն* - պողեսակի զալսբ:
*Դոխ* - ձիթատան աղացի փայտե ամբար:
*Դոշար* - թթի և այլ մրգերի հյութից եփված քաղցու:
*Դովլաթ* - ծիսական թխվածքի մեջ դրվող կորիզ կամ մետաղադրամ:
*Եղենի* - ձիթապտուղ:
*Ընգըզխաշու* - ծիսական և առօրյա կերակուր:
*Զամբյուղ, զամբալ* - ուռենու ոստերից գործված զամբյուղ:
*Զամբալատուն, ճըպտատուն* - զամբյուղների պահեստ:

*Թափթփան* - հացատեսակ, որին ծվի ղեղնուց են քսել և վրան ծիթատուների հատիկներ սփռել:
*Թուխտ* - ծիթաման, պատրաստված գոմեշի եղջյուրից:
*Լական* - ղահուկանման ագանելիք, ծյան վրա քայլելու համար:
*Լեղ, իլիկ, մազի, շվոլ* - աղացաքարը կալում ուղղահայաց վիճակում պահող սյան երկաթե միջուկ:
*Լիթոն, պիժիկ, ճնճաքար* - առանցքակալի դեր կատարող պղնձե գոգավորություն:
*Լիճք* - ջրով և ծեթով լցված կոնք:
*Լոկոն* - մաղած կրի և քրքրած բամբակր ծեթով հունցված մածուկ:
*Լուծ, նետ, նետիկ, իլիկ, նաղի* - աղացաքարի կենտրոնի անցքով անցնող փայտե ձող:
*Խալվար* - չափի միավոր (30 փութ):
*Խալֆա* - ծիթհանի վարպետ:
*Խան* - չափի միավոր:
*Խաչկապ* - գերանների և արջի միացման տեղը:
*Խավիծ* - ծիսական կերակուր:
*Խեմք* - ծիթհանի կալի տախտակե բոլորք:
*Խծուծ* - ծիթատուների ցողուններից ստացվող կարճ թելանյութ:
*Խոռոչ, օջախ, պատվոն, գերնի գլխատուն* - պատի ստորին մասում թողնված խորշ, ու ր դրվում էր մամլիչ գերանի ծայրը:
*Խոտհինձի պաս* - կամավոր պաս ամառվա ընթացքում:
*Խրնապ* - կանեփաթելից հյուսված պարան:
*Ծեփ, կոծիկ* - ծեթի խառնուրդով շաղախ:
*Ծխնքար* - ծխնելույզը փակելու քար:
*Ծոմ* - հրաժարում բոլոր տեսակի ուտելիքներից:
*Կալ, տինգ, քառակ* - ծիթհանի աղաց:
*Կալատուն, կըլլատուն, դդքատուն* - ծիթհանի առաջին արտաղրամասը:
*Կալքար, ծեծքար, քարաղ, ջրքքար, մասարաքար* - ծիթհանի աղացաքար:
*Կախն առնել* - զտումն ավարտել:
*Կախտուն, կախելատուն* - գերանատան պտուտակային սարքի հատվածը:
*Կախքար, կախելաքար, մսխալի քար* - պտղեսակի ստորին ծայրին ամրացված քար:
*Կակաչ, խաշխաշ, պուտ* - յուղատու սերմեը պարունակող բույս:
*Կաղնուտ, անտառակ* - տկողինի այգի:
*Կանեփ, կանափ, կանափատ, կանար, չատանա* - ծիթատու բույս:
*Կանեփաթակ, ջրկոպալ* - կանեփի ցողունից թելանյութը զատելու սարք:
*Կանճրակ, կոնջրակ, հէսպիր. ասպոր, ասփուր, ասպուգան, ասպուտակ, քրքում, գաթի ծաղիկ, գաֆրան* - ծիթատու բույս:
*Կարասը խաչել* - կարասը ծեթով լցվել:
*Կոճղ, սաթ, երեսնոց, լաշ, տրի կլոխ, բարծիկ, գերնի բարծ* - գտման ավազանի չափով փայտե տախտակ:
*Կոռն, կիրա, կյոհրա, գյիրա, գեյրա, գյահրա, քյարգահ, հոլա* - ծիթատուների կալսում իրար կապված անասունների ոտքերի տակ տրորելով:
*Կոռու չվան, կոռու մնջիլ* - կանեփաթելից հյուսված պարան:
*Կովի ծիծ* - ամանորի հացի խմորից արված թխվածք խոշոր եղջ. անասունի համար:
*Կոտ* - փայտե չափ:
*Կորի* - արտում զուգահեռ արվող առուներ ոռոգման համար:
*Կտավատ, կըտվահատ, կըտվիատ, քթան, քթանհատ, տափակ կըտվահատ* - ծիթատու բույս:
*Կտավատի խոր (հոր)* - միջինքի խմորից կտավատի հատիկներով թխվածք:
*Կուտապ, կոտապ, կոտափ* - ծիսական թխվածք:
*Հալվա, հասութա, հրեշակ, խլերդ* - ծիսական ուտեստ:
*Համարենի* - ծիթատու սերմերով ծառ:
*Համկալություն, փոխօգնություն* - ծանր աշխատանքների ժամանակ համայնքի բոլոր անդամների կամ նրանց մի մասի ուժերի համախմբում:
*Հասմիկ, հասմին* - եթերայուղ պարունակող բույս:
*Հավանգ* - հատիկներ տրորելու քարե հարմարանք:
*Հիմքար* - պողոսակր ուղղությամբ, գետնում թաղված քար:
*Հլածուկ, հլացուկ* - ծիթատու բույս:
*Հյուս* - ամանորի հացի խմորից արվող թխվածք տան աղջիկների համար:
*Հնդեաղի ծեթ* - ղդմի ծեթ:
*Հոխա* - չափի միավոր:
*Հոսելի, հորսլի, ֆորսլի* - կալսված հատիկը էրնելու գործիք:
*Հովտուն, փոխնդտուն, կտավատուն* - ավազան աղացած հուքի համար:

*Հոսին* - խոտի տեսակ :

*Հովվամաղախ, ծննղապաշար, ծտապաշար, փարափարախոտ* - ձիթատու բույս:

*Հոքմի* - կամավոր պաս:

*Հրենիք, շուաք* - արտադրական առուցվածքների ծառայության վարձ:

*Ձարեմաղ* - մանր անցքերով մաղ:

*Ձեթվեթելիք* - ձմռան ամիսներին գոմեշներին ձիթելու ձեթը:

*Ձիգ* - արորի հյուսածո շղթա:

*Ձիթաճրագ* - ճրագ:

*Ձիթայուղ* - հոռոմ ձեթ, պտղի ձեթ, կույս յուղ:

*Ձիթատուն, կնճիթահանք, ղայախանա, ղահինխանա* - քնջութի ձիթհան:

*Ձիթհան, հնձան ձիթոյ, ձիթհանք, ձիթա*-հանք, ձիթիհանք, ձիթահան, ձիթխաց, ձիթղաց, ձիթհաց, ձեթի հանք, ասարա-նոց, սբա-նոց, բյազրխանա-կտավատ, սոըեկ, հլւածուկ վերամշակող արտա-դրական կառուցվածք:

*Ձիթհանի ջաղացպան* - ձիթհանի վարպետ:

*Ձձում (խնոցի)* - միջինքի խմորից թխվածք կանանց համար:

*Ղաշխակտավատ, կըտվախոտ, կսւշկա* - ձիթատու բույս:

*Ճյուղ, սըխի* - 16 փութ:

*Ճմուռ, ճմոռ, ճմրուռ* - ծիսական և առօրյա կերակուր:

*Ճոճկալ, ճիճկոլ* - մամլիչ գերաններին կայունություն տվող սյուն:

*Ճրագձկալ, ճրագթաթ, ճրագպահ* - հարմարանք, որի վրա դրել են ճրագը:

*Ճրագլուս, ճրագլիս* - կրոնական հաստատություններին տրվող ձեթի հարկ:

*Ճրագլուս* - արտերը կարկուտից պահպանելու ծես, երբ նաև ձեթ են այրել:

*Մաթ* - թթի և այլ մրգերի հյութից եփած քաղցու:

*Մսլաք* - ձիթհանի բանվոր:

*Մահլամ, յախու* - բուսայուղի կամ այծի ճրագուի և ձվի դեղնուցի խառնուրդով խյուս:

*Մաղչի* - ձիթհանի բանվոր:

*Մամուխ* - յուղ պարունակող սերմերով թուփ:

*Մանանեխ, սև կնտիկ, խարդալ* - ձիթատու բույս:

*Մատնիշունչ* - հիվանդություն:

*Մանուշակ* - եթերայուղ պաբունակող բույս:

*Մեգար* - այծի մազից գործված տոպրակ:

*Մքնտուն, խազնա, քյոթուկ* - մանուշ ավազան:

*Միջինք, հարգելիք, տարի, կրկենի, միջունք, կլոճ* - ծիսական թխվածք:

*Մոզիկ* - ձիթհանի բանվոր:

*Մրտի* - եթերայուղ պարունակող բույս:

*Մումիան* - ձեթի և մեղրամոմի խառնուրդով քսուք:

*Նազուկ* - ծիսական թխվածք:

*Նախրաթողի պաս* - դեկտեմբերի սկզբին:

*Նարդ* - եթերայուղ պարունակող բույս:

*Նիժարակ* - պողոսակի ստորին մասում ամրացվող Լծակ:

*Նոբաթ* - արտադրական կառուցվածքներում հերթի սահմանում:

*Նուկի* - չափի միավոր:

*Նունուֆար* - եթերայուղ պարունակող բույս:

*Նուշ* - ձիթատու պտուղ:

*Շաբրիկ* - չափի միավոր

*Շիրիկ, շիրրախտ* - քնջութի ձեթ:

*Ոչխարի պճեղ* - ամանորի հացի խմորից արված թխվածք մանր եղջ. անասունի համար:

*Չաքուրկա* - պատի խորշի եզրաքարերը:

*Չարչարանաց շարաթ* - մեծ պասի վերջին շաբաթը:

*Չորոց (արոր)* - միջինքի խմորից թխվածք տան տղամարդկանց համար:

*Պահք* - հրաժարում մսեղեն կերակուրներից:

*Պայրուք* - պատրույգ:

*Պաս-որոշակի սննդատեսակներից ժամանակավոր* հրաժարում:

*Պասի քյուֆթա* - ծիսական կերակյուր:

*Պաստիկ* - վուշե նուրբ գործվածք:

*Պասուց տոլմա* - ծիսական կերակուր:

*Պատրկալ* - ճրագի ծայրը, ուր դրվում էի պատրույգր:

*Պարույք* - պատրույգ:

*Պողեսակ, պողեսիկ, ոլորագերան, թեղեկոն, րուրդի, գչիր* - մամլիչի ամբարձիչ սարքավորման փայտե պտուտակ:

*Պոուզ* - հացատեսակ, որին ձվի դեղնուց էին քսում և վրան ձիթատու հատիկներ սփռում:

*Պուման* - խնամիներին առաքվող ընծա. կավե ճրագ, մեկ հաց, մեկ խնձոր:

*Ջոթ* - ձիթհանի բանվոր:

*Ջոմուշչի* - ձիթհանի բանվոր (գոմշապահ):

*Ռուփ, ռուբ* - թթի և խաղողի հյութից եփված քաղցու:

*Սանդ* - հատիկներ ծեծելու քարե սարք:

*Սեխ* - յուղատու հատիկներ պարունակող բույս:

*Սերկևիլ* - յուղատու սերմեր պարունակող պտուղ:

*Սիլմա* - փայտե չափ:

***Սոմար*** - չափի միավոր (մոտ 16 փութ):

***Սորեկ, դեղին կտավհատ, դեղին ծաղիկ, սորի, սորրկ, սորըք, սորսորիկ, ասորեկ, սորուկ, սորիկ, ախունա, զոխ, կծվուկ, ասպանդ, սոլոպուռ*** - ծիթատու բույս:

***Սրրապահք*** - հրաժարում մսեղեն և բուսական կերակուրներից:

***Սուճուխ, սուջուխ, չուչխել*** - քաղցու:

***Սուսան*** - եթերայուղ պարունակող բույս:

***Վարդ*** - եթերայուղ պարունակող թուփ:

***Վարունգ*** - յուղատու սերմերով բույս:

***Վուշ, վշահատիկ*** - թելատու կտավատ:

Տապարակ, թավարա - մետաղե հարմարանք, որն ապահովում էր ծիթատան և ջրաղացի աղացաքարերի պտույտը:

***Տապակ, էգ և որձ*** - ծիթհանի արջի երկու մասերը:

***Տերեփուկ*** - եթերայուղ պարունակող բույս:

***Տզկանեփ, տզկանեփատ, տզկահատ, տիզկանափայտ, սրո հատ, գերչակ, գենագերչակ*** - ծիթատու բույս:

***Տիկ*** - հեղուկ նյութեր պահելու և տեղափոխելու տարա:

***Տիկին (տիկնիկ)*** - միջինքի խմորից թխվածք տան աղջիկների համար:

***Տկողին, արքայականղին, կաղին, տխիլ, պնդուկ*** - ծիթատու պտուղներով թուփ:

***Ցախ*** - մանանեխի չորացած ցողուն:

***Ցից, ծառ, սուն, կալի սուն*** - աղացաքարի հենարան և պտտման առանցք:

***Ցորենի խոր (հոր)*** - միջինքի խմորից ցորենի հասփկներով թխվածք:

***Փթռուկ*** - ծիսական և առօրյա ուտեստ:

***Փոխ*** - օրինական պասերից առաջ պահվող կամավոր պաս:

***Փոխինձ, փոխինդ*** - ծիսական կերակուր:

***Փոկեմաղ, քարմաղ*** - խոշոր անցքերով մաղ:

***Փութ*** - կշռի միավոր (16 կգ):

***Քալաճոշ, գալաճոշ*** - ծիսական և առօրյա ուտեստ:

***Քամի*** - հիվանդություն:

***Քապքապ, փուլ, ռշի*** - ձյան և քարակառկանների վրայով քայլելու ագանելիք:

***Քարխեց*** - հիվանդություն:

***Քարկիճ*** - ուռուցք:

***Քերծ*** - ընական ժայռ:

***Քթան*** - կտավե գործվածք:

***Քթիթ*** - կտավատի թելանյութից պատրույգ:

***Քյալչի*** - ծիթհանի բանվոր:

***Քյանքուլ*** - միջինքի խմորից թխվածք տղաների համար:

***Քյարվանխաշու*** - ծիսական և առօրյա ուտեստ:

***Քնջութ, քունջութ, քոնջիթ, կնճիթ, կնջիթ, կնճութ, շուշմա, սուսամ*** - ծիթատու բույս:

***Քնջութի կաթ, դայան*** - քնջութի աղացված զանգված:

***Քորք, քթիթ, ժժան*** - կանեփի և կտավատի ցողունից ստացվող թելանյութ:

***Քսակ*** - ամանորի հացի խմորից թխվածք տղաների համար:

***Քրջիկ*** - ծիսական և առօրյա ուտեստ:

***Քուսպ, քոսպ, կոսպ, գուսպ, կոպառն, կոպտուն, կուսբ*** - ձեթի զտումից ստացվող երկրորդական մթերք:

***Օջախ, սեդան*** - վարի աղացաքար:

***Օջախ*** - ջուր տաքացնելու կռակարան:

***Օջախի կպչան*** - կտավատի ցողունից պատրաստված դյուրավառ նյութ:

***Ֆոնջի*** - ծիթհանի բանվոր: